

# ԵՍԴԵՐԱԿ

## ՊԵՏԵԿԻ ԳԵՏԵԼԵԸ

ՀԱՅՈՒԹ:

ԵՊՐԻԼ 1. 1854:

ԹԻՒ 76:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

Կրօնքը անձնական պարտաւորութիւն մը ըլլալը . Երեւ . 49 : Պահապացի Պիղասոս . Եր . 51 : Գողզութիւն . Եր . 52 : Ծրբութեան ճամբան մէկ է . Եր . 53 : Մատականակարի մէջ Քրիստոնէից կրած հալածանքը . Եր . 53 : Տէրունական օրը սուրբ պահէնուն վրայով . Եր . 55 : Խնդիրը կառավարել . Եր . 56 : Ճշմարտութիւն և մոյորութիւն . Եր . 56 : Քրիստոնէական մարդասիրութիւն . Եր . 57 : Ծնոտանեաց մէջ խաղաղութիւնը հաստատուն պահէլու կանոններ . Եր . 58 : Զորցած թվէնին . Եր . 58 : Առողջութիւնը պահէլու կերպը . Եր . 59 : Աստուածաշունչն թարգմանութեան օգուտը . Եր . 59 : Ճեթանոսութեան տկարանալը . Եր . 60 : Պարակական առակներ . Եր . 61 : Խաչին զօրութիւնը . Եր . 61 : Հին հայրերուն մէկ այլբարանական առակը . Եր . 62 : Պատմութեան հին գերբը , աղջ համար . Եր . 62 : Աս կէս դարուն պատուշները . Եր . 64 : Զարերուն խորհուրդները ցըուած ու փուճը եւած . Եր . 64 :

### ԿՐՕՆՔ

ԱՌԵՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ  
ԸԼԼԱԼԸ

Վարդիկասահնակի մէջ իրենց ունեցած յարաբերութեանցը շատերուն նկատմամբ , խիստ հնար է որ՝ կամ ամենը կամ ըստ մասին ուրիշի միջոցով կատարեն իրենց պարտաւորութիւնները , առանց բուն իրենց անձնական աշխատութեանը : Վաճառական մը՝ կրնայ մէկ ուրիշը գործածել , իր վաճառքները կամ վճարմունքները իր տեղը ընելու . հայր մը ուրիշը բաներու պարապած ըլլալուն , կրնայ վարժապետ մը՝ բանել իր զաւակացը դաստիարակութիւն տալու համար . ու թագաւոր մը՝ օտար տէրութեանց հետ ունեցած գործքերը , իր գեսպաններուն ձեռօքը կը կատարէ : Այս ու ասոնց նման ուրիշը պարագաներուն մէջ գործածուած գործակալին վերատեսչութիւնն ու ընտրութիւնը թէ որ պատշաճ կերպով եղած ըլլայ , պարտաւորութիւնները կատարուած կ'ըլլան , և մէկը չկրնար գանգատ ընել թէ անուղղակի կերպով աս գործքերը կատարուեցան : Բանն ան է որ՝ ոյս պատաւորութիւններուն բնութիւններ անանկ մընէ , որ աս կերպով կրնայ կատարուիլ : Բայց անանկ պարտաւորութիւններ կան որ իրենց բնու-

թեանը կողմանէ բոլորովին ասոնցմէ տարբեր են , ու նոյն կերպով չեն կրնար կատարութիւն : Օրինակի աղագաւ . բնաւ մէկ մարդ մը չկրնար ուրիշը մէկը դնել որ տեղը թագաւորութիւն պատուցանէ , կամ իր տեղը եղբայրը սիրէ , կամ իր տեղը աղքատին գթայ , ու իրեն կողմանէ անոնց մարդասիրութիւն ցոյց տայ : Ոչ ալ կրնայ մէկը գուխանորդութեամբ Աստուած սիրել , կամ Անոր Հապանղիլ . զզջաւ իր մեղքերէն , կամ աշխարհը Փրկողին վրայ հաւատք ունենալ : Այս առաջարկութիւնը այնչափ զգալի օրինակալ յայտնի է , որ ասոր պարզապէս խօսքը եղած ատենը՝ ինքնին կը համոզուի լորդը . և տակալին ակնյանիման և յայտնի ճշմարտութիւն մընէ , որ անհամար կրօնական վարդապետաց սորվեցուցած ու գործածած կերպը ուղղակի ասոր հակառակն է : Անոնք կը սորվեցընեն թէ մարդիկ գէպի առ Աստուած ունեցած յարաբերութիւններնէն յառաջ եկած պարտաւորութիւններին ու հնագանդութիւննին կրնան փոխանորդութեամբ կատարել . և թէ մարդկային միջնորդ մը կրնայ բոլոր գործը վրան առնել ու ամեն կողմանց կատարելապէս գոյչունակութիւնովը լմնցնել : Աս փոխանորդութեան գործը՝ պայմաննեալ մէկ գին մը տրուելով ու սուացուելով կը

կատարուի . և այսպէս՝ առեւտրական գործառնութիւններուն բոլորովին նման կ'ըլլայ :

Ասկէ արտառոց և չար տուրեառութիւնն մը , և ասկէ ալ աւելի մոլորական և վասակար հետեանք ունեցող բան մը չկինար մարդուս մոքէն անցնիլ : Ուտակ ու Խշանութիւնն սիրելու սէրը՝ մէկ կողմանէ , և բարեպաշտ կեանք մը անցնելին աւելի զիւրին կերպով մը Վատուածային շնորհքը ստանալու փափաքը՝ միւս կողմանէ , աս մահարել զրութիւնը հնարեցին ու պաշտամնեցին : Դրեթէ անհաւատալի բան մըն է որ՝ Վատուածոյ խօսքը կարդալու սովորութիւն ընող , կամ Վւետարանին վարդապետութիւններուն ուղեղ հասկցուզութիւն ունեցող որ և իցէ մէկը՝ ասանկ խարեւութեան վրայ իր յոյսը դնելու համարձակի :

Վատուածոյ պահան ջմուքները ինչ են որ մեզի կ'առաջարկուի , որ աս զիւրին և շնչն կերպովը զանոնք մէկդի ձգենք : Մէր Փրկիչը կ'ըսէ որ՝ առաջին ու մեծ պատուի բանքը աս է , թէ ա՞ռու Տէր Վատուածդ պիտի սիրես քու բոլոր սրտէդ , և քու բոլոր անձէդ և քու բոլոր մոքէդ : Նըկրորդը ասոր նման քու ընկերոց պիտի սիրես քու անձիդ պէս” : ( Մատ . իթ . 37—40:) Եւ “Այս երկու պատուի բանքէս կախուած են բոլոր օրէնքը և մարդարէնները ” : Հիմա թէ և մենք Վւետարանական տնտեսութեան ներքեն ենք , բայց աս օրէնքին բոլանդակութիւնը՝ բոլոր անոր վրայ հիմնուած և մանրամասնաբար տաանաբանեայ օրէնքին մէջ նշանակուածներովը մէկտեղ , Մոլվսասական տնտեսութեան ներքեն եղող մարդոց հարկեցուցիչ եղածին պէս է Ճիշդ մեզի ալ : Քրիստոս կ'ըսէ . «Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարդարէնները աւրելու . չեկայ աւրելու , հապս կատարելու : Շշմարիս կ'ըսէմ ձեզի . Մինչեւ որ երկինք և երկիր անցնին , օրէնքներէն յովտ մը կամ նշանագիր մը , պիտի չանցնի , մինչեւ բոլորն ալ կատարուի” : ( Մատ . ե . 18 :

Կը հայցընեմ ուրեմն . կրնայ մէկ որ և իցէ ուրիշ մարդ մը աս օրէնքին պարտաւորութիւնը կատարել մեր տեղը . կրնայ

մէկ մարդ մը իմ տեղս՝ ինքը Վատուածսիրել , ու իմ տեղս՝ իմ ընկերս ինքը սիրել : Իոն խոկ հարցումը արտառոց բան մըն է : Յայտնի է որ օքնէնին պահան ջումները՝ ուղղակի և անհրաժեշտ կերպով ամէն հոգւոյ վրայ պարտաւորին են , և բնաւ չեն զատուիր անկէ քանի որ Վատուածոյ աթուուր կը մնայ :

Բայց մենք Վւետարանին ներքեն ենք . Վատուածոյ օրէնքը ամէն մարդ կոտըկց , ու անոր սոսկալի պատժոցը ենթակայ եղաւ : Վւետարանը՝ մարդոյս աս թշրւառ և անօգնական վեճակին զարման կ'ընէ , և մէկեղանակ մը կը քարոզէ , որ անով մեղաւորները Վատուածոյ շնորհքը կրկին կը գտնեն ու օրէնքին անէքքէն կ'ազատին : Տեսնենք ուրեմն , թէ աս նոր տնտեսութեան ներքելը կայ անանկ բան մը՝ որ օրինազանց մարդոց թոյլտութիւն ընէ Վրարջն ու իրենց մէջ տեղը մարդկային մի ջնորդութիւն մը ընելու համար մտնելը , կամ բարոյական պարտաւորութեանց մէկ մեղաւորէն ուրիշ մը անցնելը :

Վւետարանին պահան ջմունքն ու աւաշարկածը ինչ են : Քրիստոս և իր առաքեաները հաւատք և պահշանարութիւն քարոզեցին , իրբւե պայմանք փրկութեան . «Են որ Որդուոյն կը հաւատայ յաւկտենական կեանք կ'ընդունի . և ան որ Որդուոյն չնազանդիր կամ անոր չհաւատար , կեանք չտեսներ . հապա Վատուածոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ” : Յուն . դ . 36 : «Վպաշխարեցէք , ինչ ըու որ երկնից թագաւորութիւնը մօտ է” : Մատթ . դ . 17 : Ուստի բուն խոկ անձամք մեղք գործող մարդէն ի զատ , ո՞լ կրնայ բարեպաշտական յաւ մը զգալ անոր գործածներուն վրայ : Մէկ ուրիշ մը գժուալը կրնայ գալ իմ մեղք գործէլ . բայց չկը նար ի՞ռհմանաց խայել զգալ իմ մեղքերուս համար , և ոչ ալ անոր համար ապաշխարել : Մէկ ուրիշը կրնայ հաւատալ որ Յիսուս Քրիստոս իմ մեղքերուս համար քաւութիւն ըրաւ . բայց չկը նար ան Փրկչն վրայ հաւատագութ ունենալ իմ կողմանէս : Վարուկաբելութիւնը մարք անցնելը անգաման աստիճան անտեղի է որչափ որ մէկուն ու րիշ մէկ մարդու մը տեղ հայ ուտելը , քը

նանալը, ուրախանալը կամ որտմիլը :

Եղոր նիւթիս համառօտութիւնն աս է ուրեմն որ Աւետարանին մէջ մեղաւորաց առաջարկուած փրկութեան մի միայն պայմանները անանկ են, որ բնաւ որ և իցէ կերպով ուրիշն մը ձեռօք կամ ուրիշ կերպով մը չն կրնար կատարուիլ եթէ ոչ ուղղակի և միայն ամէն մէկ մեղաւորի առանձին իր միջոցովը . ու բնաւ միջանկեալ մէկ միջնորդ մը չկայ մարդոց և Աստուծոյ մէջ տեղը բաց ՚ի Աստուծոյ Որդիէն, որով մեղաւորներուն ընդունուելուն համար մէկ ճամբայ մը բացուած է :

Կրօնքին բոլոր գործողութիւնները անյանք ըլլուելիք գործ են : Անք պէտք է որ անձամբ ապաշխարենք և հաւատանք . մնք պէտք է որ անձամբ Աստուած սիրենք և անոր հնազանդինք . մեր աղօթքներն ու փառարանութիւնները մենք անձամբ նույիրելու ենք Ճիշտ ան նոյն կերպով որ՝ ամէն մէկերնիս ինք անձամբ մեռնի պիտի իր տեղը, ու ինք անձամբ ներկայանայ վերջին օրը դատաստանի առեանին առջեւ՝ առանց մարդոցնէ մէկ բարեկամի մը կամ փաստարանի մը օգնութիւնը ունենալու :

### ՊՈՂՏԱՑԻ ՊԻՇԱՏՈՍ

Աս մարդը Սուրբ Քրոց մէջ յիշուած է քսան անգամ. այսինքն տաննութեց անգամ Աւետարաններուն մէջ, երեք Գործք Առաքելոցին, և մէկ անգամ ալ առաջին Տիմոթէոսին մէջ : Խր անունը նաև կը գտնուի՝ Առաքելոց ըսուած հաւատոյ ան հին հանգանակին մէջ : Աս մարդուն հետ կապակցեալ արտաքոյ կարգի հետաքրիւթիւն մը կայ այն նկատմամբ, որ ինք Քրիստոսի դատողն էր : Մէկ քանի դիտելու բաներ կան ասոր վրայով՝ որոնք հիմա պիտի ցուցնենք :

1. Խր անունը: Պողոտացի՝ իր գերդաստանին անունն էր . կամ ինչպէս որ սովորաբար կ'ըսենք, մականունն էր : Պիղոտացի բուն իրեն դրսութ անունն էր, ու Պողոտացի կոչուած ընտանիքին եղող ու բիշներէն որոշելու համար :

2. Խր հայրենիւր: Հոռվլմայեցի երջնդեամբ : Խր նախնիքները՝ հին Հառվամայեցոց մէջէն, ու անոնց երկեւլիներէն էին : Ինքը Հրէայ չէր :

3. Խր պալատնը : Մէր աշխարհաբառ Աստուածաշունչին մէջ, Աստթէսա աւետարանիչը՝ “կառավալու” կ'ըսէ . և Պուկաս՝ “Հրէատատանի կուտակալ” : Յայտնի է թէ իր աստիճանը ան տեղի պաշտօնատարներէն ամենէն վերինն էր :

Պիղատոս՝ Յուղայէն դուրս տեղերուալիրօ կառավարին էր . վասն դի ան երկիրը Անուրիայի հետ միացուցուած մէկ գաւառը մը եղեր էր, որ ընդհանրապէս Անուրիա կ'ըսուէր : Պիղատոս՝ Վալերիոս Կրաքուին յաջորդեց, ու իր պաշտօնը Տիբերիոս կայսեր ժամանակը վարեց :

4. Խր բնաւորութիւնը . անդուսպ բնութեան տէր, կամսկօր և անդորքելի մարդ մըն էր : Կերեար թէ իր վարած իշխանութեանը մէջ, իլեն կուտավարութեան ներքեւը գանուած մարդոց սիրուլ վերաւորելը իրեն փառօք մը կը սեպէր : Ինքը ագահ և արիւնախանձ էր : Տաճարին ընծանելը բանի յափշասկեց, և աննուիրական սեպուած ընծաներուն ստակը մէկ ջուրի ճամբայ մը շինելու գործածեց : Ինքը մէկ քանի Գալիլեացուոց ասրինը իրենց գոհէրուն հետը խառնեց” :

Տիբերիոս կայսրին ականջը գանգատնելով լցուած էր ստոր վրայօքը, մէր Փրկչին դատաստանը դեռ իր առջին ըբերուած : Վսիկա կրնայ սեպուիլ մեր Տիբոջը մահուան վճիռ տուողը : Ինքը “զիտէր որ բահանայապէտնելը նախանձի համար մատներ էին զանիկա” : Խրեք անգամ աս հարցումը ըլլաւ . “ինչո՞ւ” դատապարտեմ անիկա : “Քնչ չար գործ ըլլած է տափիկա” : Խրեք անգամ ըստւ . “Ես անոր վրայ յանցանք մը չեմ գոներ” : Խր կնիկն ալ զգուշութիւն տուաւ իրեն՝ որ չդատապարտէ : Խրբոր լսեց թէ Քրիստոս ասու “իմնեղինքը Աստուծոյ Որդի ըրաւ, ալ աւելի վախցաւ” : Եւ սակայն դատապարտեց : Եւ ի՞նչու : Ենոր համար որ՝ կը յուսար թէ իրեն դէմ Տիբերիոսին ըրած Հրէայ դատապատները կը դադրի :

Հրէաները շարունակ աս պատճառը կը ցուցընեին որ՝ եթէ Պիղատոս Յիսուսը թող տայ որ երթայ, Տիբերիսին գանչ գատանաց արդար պատճառ մը պիտի ըլլալսյ. ըստ որում Յիսուս ինքնինքը թագաւոր ըրաւ. և ուստի «Պիղատոս ժողվուր» ու գոհ ընել «ուլլալ», Բարաբան արձակեց անոնց, ու Յիսուսը ծեծելով ձեռք տուաւ որ խաչուի»: Պիղատոս սրդողուց ցած էր արդէն Տիբերիսուր՝ ուրիշ բանի մը պատճառաւ, որուն համար Հրէաները գանգատ ըրած էին: Ուստի կը յուսար որ Հրէաներուն հաճելի ըլլայ, և աս կերպով կայսրին չնորհքը վայելէ: Աս բանէն ետև շատ չոնցած մեծ բանութիւն ըրաւ ան գաւառին մէջ, և հրաման եկաւ Հոռվմէն որ երթայ իր ըրածին հաշեւը տայ. բայց Պիղատոս Հոռվմ՝ հանելէն առաջ Տիբերիս մեռել էր:

5. Իր կանոնը: Սոր ինչպէս ըլլալուն վրայ քիչ մը երկայսութիւն կայ. բայց Եւսեբիոս և ուրիշ երևելի պատմիներ սա խօսքին հաւատք կ'ընծայէն թէ Հոռվմէն, Դաղղայի մէջ Տօֆին ըսուած նահանգը՝ Վենեա քաղաքը աքսորուեցաւ, և հոն այնպիսի սաստիկ խեղջութեան մէջ ինկաւ որ՝ յուսահատութենէն իր սուրով ինքնինքը սպանեց, ու բոլոր աշխարհին Դատաւորին առջել ներկայացաւ:

6. Ինչը պահանջն Վրբնաբոսի առկանէն առջև առ պիտի ներկայանոյ. Են ժամանակին տեսարանը Երուսաղեմի մէջ եղած իր ատենի դատաստանի ատենինէն որչափ տարբեր պիտի ըլլայ: Դատաստանի բերուողը՝ Դատաւոր պիտի ըլլայ, ու դատաւորն ալ դատաստանի պիտի զայ: Կոնքով ջուր չպիտի գոնուի, որ մէկ անիրաւ վճիռ սի մը մեղքը անպարտ հանէ: Իր ատենանը բերուածին վրայով՝ անմեղ էր ըսելը բաւական չէ. և չպիտի կրնայ զինքը արդարացն արդար պատճառը մատնեց: Հրէաները մատնեց:

Սոր վրայ հետևեալ ծանօթութիւնները կու տանք :

1. Մեղաւորին յաղթութիւնը կարձատեէ: Որչափ քիչ քշեց Պիղատոսին յաղ-

թութիւնը: «Եմբարիշտներուն խոտի պէս բունիլը ու ամէն անօրէնութիւն գործող ներուն ծաղկիլը, իբենց յաւիտենական կորստեանը կը տանիի»: (Ապղ. դք. 6:)

2. Եմբարիշտ մարդոց ըրած դատաստանին պատճառով՝ արդարը սարսափելու չէ, թէ դատաստանական ատենի մէջ ըլլայ և թէ անկէ դուրս երբ որ անոնք սուտ ու անիրաւ են: Բաւական է որ մեր Տէրոջն ու վարդապետին բաժան բոլոր ըլլայ: Վերջին օրը ամէն բան շտկուի պիտի: (Ճաղ. ե. 8:)

3. «Երունտէր ու նենգաւոր մարդիկը օրերնուն կէսին պիտի չհասնին»: (Ապղ. ծե. 23:) Թէ որ թշնամիի մը սուրը անոնք աշխարհէն չվերցընէ, կարելի է որ բուն իրենց սուրբովը մեւնին:

4. Ո՞վ պիտի անիրաւութիւն լնելէն աւելի՝ կրելը յանձնաւուու ըլլայ: Ըստ աղէկ է որ՝ զըպարտուի մէկը, քան թէ զըպարտութիւն ընէ. իրեն վրայով գէշ խօսին, քան թէ ինք ուրիշին վրայ գէշ խօսի. առանց պատճառի ատելի ըլլայ ուրիշներուն, քան թէ մէկ պատճառով մը. աղքատ ըլլայ, քան թէ ուրիշները աղքատցընէ. մահ յանձնաւու ըլլայ, քան թէ անմեղին մահուանը պատճառ ըլլայ:

Գ Ո Ռ Ո Ւ Թ Տ Ի Կ Յ ։ Զինատանի Ծանկէ քաղաքը նստող Խւրսպացի մը իր գլուխ եկած մէկ գէպը կը պատմէ:

«Դշակի ատեն ժամանակը մը գործուած էր՝ կ'ըսէ ամեր պատկերու սենեակներուն մէկէն: Խոսնկ պարտագայի մը մէջ մէկ դարման մը չկայ. գոնէ անանկ մէկ դարման մը՝ որ արդարութիւն և մարդկութիւն սիրող մէկը, աղէկ խաճմշտանքով կարենայ զանիկայ գործածէլ: Թէ որ աս գործը գաւառական ժամանակնէն մը (գաւառոր) առքն հանելու ըլլայի իմ ամենէն աւելի կամած ըրած մարդուա անունը տալով, առջն ընելիք բանը՝ շատ հաւանական է որ ան մարդը բռնել տալ և ժէնել պիտի ըլլար, բննութիւն ընելէն առաջ. կամ թէ որ ան մարդը գիւրութեամբ չկրնար գոտուիլի իր հայրը կամ եղբայրը կամ ուրիշ մէկ աղքականը բանուը պիտի գրուէր, ու շատ անգթութիւն պիտի կրնային բանեցընել անսոց: Թէ որ օտարական մը ուզելու ըլլայ իր ժոնալին (բ. դ. մանին) ձեռօքը աս տեսակ գործի մը կատարում պահանձել շատ ապահով է որ ուզածը կատարուի և հատուցում մը ըլլայ: Թէ պիտի երեսն մարդս պարտաւոր կ'ըլլայ, թէ և անուղղակի կերպով, ուրիշներուն անիրաւութիւն ընել: Խայց իմ կողմանէն ես ըսի որ Հեթանոսի առջև գատի ելլելն ալէկ է հանդարտ կենալը իմ ստացուածքս կորսցնելու»:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ ՄԵԿ Է

**Ա**նգղեց Ահավիառ Վիքթորիա թագուհոյն հանգուցեալ Հօրը Քէնդի Դուքսին Տամար ըստած է որ՝ մեռնելուն մօտ, իր հոգւոյն փրկութեանը համար փոյթ ունենալը յայտնեց. և իր երկիւղը հանդարտեցնելու ջանք ըրին, իր բարձր աստիճանին և կենացը պատուալոր ընթացքին վոյ խօսքեր ընելով. բայց ինքը՝ իրեն մշիթարիչ ըլլալուզողները լոեցուց աս խօսքով. «Ո՞չ. ո՞չ. աս աղէկ գիտցէք, որ եթէ ես փրկուիմ, չէ թէ էլիանէ մը պէս՝ այլ հեղանոցէ մը պէս պիտի փրկուիմ»: Վատ չիտակ է աս խօսքը: Տեսակ մը փրկութեան ճամբայ չկայ հարուստին և իշխանաւորին, և ուրիշ տեսակ մը աղքատին ու ստորին աստիճանի մարդուն. տեսակ մը իշխանին և ուրիշ մը գիւղականին: Մինակ հէ ճամբայ մը կայ: Ամենն ալ պէտք է որ ըսեն թէ՝ «Վատուած ողորմէ ինձի մեղաւորիս». և իրենց զրուցանին զան, կամ ան փոսին մէջ իյնան, ուսկէ որ փրկուելու հնար չկայ: Ով դուն կենաց ծովուն վրայ նաւարկութիւն ընող. մի մերժեր ճշմարտութեան ուղեցուցութիւնն ու Վատուծոյ օրհնեալ Հոգին, գեռ շնորհայ վերջին Բարոսը (Վապտերին աշտարակը) շնցած, և յուսահատութեան ժայռին վրայ նաւդ չխորտակած:

### ՄԱՏԱԿԱՍԿԱՐԻ ՄԵԶ

ՔՐԻՍՏՈՆԵՒՑ ԿՐԱԾ ՀԱԼԱԾԱՆՔԸ

**Ա**նոնք որ ատենօք աս Տէրութեանը մէջ իրենց ստացուածքը կորսնցնելու, իրենց ապրուսէն ու գործքերէն վնաս քաշելու, մարմնաւոր պատիժներ ու կերպ կերպ հարստահարութիւններ կրելու ենթակայ էին, միայն ան պատճառաւ որ՝ Վատուծոյ խօսքը իրենք իրենց կարգալու, և իրենց խղճման-

քին ազդարարութեանը համեմատ Վատուծոյ պաշտօն մատուցանելու որոշած էին, պիտի տեսնան հետեւեալ պատմութեան մէջը որ՝ Վրիտոսի հետեւողները, ուրիշ երկիրներու մէջ աւելի սաստիկ նեղութիւն կրած էն. և կը յուսանք թէ աս պատմութիւնը կարգալով, Երմեռանդ աղօթքով խնդրեն որ՝ ամէն երկրի մէջ Վատարանին համար չարչարանք քաշողները՝ աղատին իրենց հարստահարողներուն ձեռքէն, և շուտով գայ ան օրը՝ որ ատեն բոլոր մարդիկ աղատութիւն պիտի ունենան Վատուծոյ հարստացած Խօսքը կարգալու և անոր հետեւելու: Եւ նոյն ատենը, բոլոր շնորհաց Վատուծոյն փառք տան որ՝ չէ թէ միայն աս Տէրութեանը մէջ, այլ նաև երկինքին տակը գտնուած բոլոր ուրիշ տեղերն ալ անանկ բաներ կը տեսնուի որ՝ Վատուծային օրնութեամբը աս փափաքելի վախճանը շուտով համենիլը կ'երեւայ:

**Վ**ատ ատեն չըներ որ լուր առնուեցաւ Վատակասկարէն թէ՝ հալածիչ Ժագուհին աթոռէն հրաժարելու ու իր տղին նորհելու միտք ունէր, որ Վրիտոնեայ մըն է ինքը. և ասոր փոխարքան ալ Վրիտոնեայ մը պիտի ըլլար, որուն հայրը Ժագուհիին կառավարութեան ժամանակի ան արիւնահեղ հալածանքներուն թէլագրութիւն ընող փոխարքան էր: Կը հաւատանք որ՝ ալ ասկէ ետե Վրիտոնէական պաշտամունքը և քարոզութեան գործը, աղատ պիտի ըլլայ ան նդգարձակ կղզիին մէջ:

Վատակասկարի մէջ 1849 ին եղած հաշածման ատենը՝ պատու և ունի անհինտ իրենց վկայութիւնը արիւնովին կնքեցին: Վնակը բնիկ Վրիտոնէաներուն քով պահուած նամակէ մը՝ որ մօտերս երեան ելլելով ձեռք անցած է, հետևեալ տեղեկութիւնները կը քաղենք:

Վրիտոսի խոստովանող, և անոր համար ամէն բաներնին զոհ ընելու պատրաստ եղող անձանց համար աս վճիռը տրուած էր որ՝ անոնցմէ չորսը ողջ ողջ այլունին: և ասոնց մարմինները՝ վճույն համեմատ բոցերուն մէջ սպառեցան: Ոիւս մարտիրոսները՝ որոնք թուով տան և չորս էին, ինանի համար ըսուած դահավէմն ՚ի վար նետուելու դատապարտուեցան, և անոնց մարմինն ալ՝ միւս

իրենց ընկերներնուն էրած տեղը այրուելու : Աս վճիռներուն ամէնն ալ կատարուեցան նահատակներուն վրայ :

Եւ ան գերիները՝ որոնք իրենց Քրիստոնեայ ըլլալին խոստովանելով՝ յանցաւոր գտնուած էին, վճռուեցաւ որ քսանական գաւազան ծեծ ուտեն ուրիշ յանցաւորներուն պէս, և կերած ծեծերնուն թուոյն չափ ալ ստակ վճարելով՝ աղօթք ընելու յանցանքնուն քաւութիւն ըլլայ : Ծն ատենը, Քրիստոնեաներէն զատ բոլոր ժողովուրդը՝ միաբանութեան երդում ընելու կանչուեցան, եղի մը գիուն տէդ մը խօժելով, և մեռած թագաւորներուն գերեզմանէն առնուած սուրբ հողը՝ օրնած ջուրի հետ խառնելով, ու անիկա խմելով :

Գերութեան դատապարտուած Քրիստոնեաները՝ ան տտենը ծախեցին բոլոր ժողովը ներկայութեան առջելը: Լուր մըն ալ ելաւ ան ատեները որ՝ թագուհին աս նոր կրօնքին պաշտամունքը իր երկրին մէջ արգիլելու համար, Խմբինայի վեց գաւառին մէջ՝ մէկ մէկ հատ յիշատակի արձան կպնդնելու միտք ունի:

Ուամանձա անուն թագաւորազունը՝ որ թագուհին եղօրորդին է, հարիւր թալեռ վճարելու դատապարտուեցաւ՝ Ճմարիտ Կատուծոյ երկրպագութիւն ընելու մեղքին քաւութիւն ըլլալու համար: Ուամանձա պալատին պաշտօնեաներէն մէկն է, յիսուն թալեռ վճարելու դատապարտուեցաւ, բայց աս երկուքին տուգանքն ալ կէսուակէս վարելցուցին ետքէն, և զինուորական կարգի ու Տէրութեան ուրիշ պաշտօնեաներու մէջ եղող՝ Քրիստոնեայ աստիճանաւորներուն ամենուն ալ պատիւն առին:

Քրիստոնեայ պաշտօնատարներն ու ժողովուրդը ետքէն աղերսագիր մը տալով, թագուհին զիշաւ գերի ծախուած Քրիստոնեաներուն կնկացն ու աղոցը վրայ դրուած ազատչերին ստակը իջեցնելու: բայց աս հըրամանը տրուելէն օր մը ետքը՝ մեռցուած Քրիստոնեաներուն կնկացին ու աղաքը, մինչեւ ՚ի մահ չփրկուելու գերութեան դատապարտուեցան:

Աս հալածման ատենը՝ հալածնք կրողներուն հաշիւները աս հետեալներն են:

Տասն և ութը անձինք ՚ի մահ մատնե-

ցան, չորսը այրուելով և տասն ու չորսը գահավէժն ՚ի վար նետուելով:

Վեց հոգի ալ՝ իրենց կնիկներովն ու զաւկըներովն մէկ տեղ գերի ըրին:

Քսան և եօթը քարողեներ՝ իրենց կընկառոցն ու զաւկըներուն ազատչերին կէս զինը տալու դատապարտուեցան: Քառասուն ու երկու անձինք՝ որոնք իրենց քովի գիրքերը ետքերին, անոնց ստացուածոցն ու անձերնուն ալ ազատչերին կէսը տուժել տուին:

Քսան և եօթը քարողեներ, ու Վանեցնի զաւառէն բոլոր իրենց գիրքերը ետքերողները նոյն պատիժը կրեցին:

Հազար վեց հարիւր քառսունուիրեք անձինք՝ Ճմարիտ Կատուծոյ երկրպագութիւն ընելու մեղքին քաւութիւն ըլլալու համար, վճռուեցաւ որ ամէն մէկը իրեք եղ և իրեք թալեռ վճարեն, բայց աս գումարին կէսը ետ տրուեցաւ:

Հարիւր ինը գերի ծեծ ուտելու դատապարտուեցան՝ ամէն մէկուն քսանական զաւազան ծեծ զարնելով ժողովը առջել, ու իրենց կենացը մնացեալ մասին մէջ երկաթի շղթաներով կապուած ծանր աշխատանքի մատնուեցան:

Երկու հոգի տուգանք վճարելու դատապարտուեցաւ, մէկը հարիւր, և միւսը յիշուն թալեռ, բայց ասոր կէս գումարը ետքէն ետ տուին:

Եռաջմանէ պատժուած վեց անձինք՝ բոլոր կեանքերնուն մէջ երկաթի շղթաներով կապուած, ծանր աշխատանքի դատապարտուեցան:

Երկու գերի ալ՝ Եւետարանին վրայով խօսելուն համար, բոլոր կեանքերնուն մէջ շղթայով կապուած՝ ծանր աշխատանքի դատապարտուեցան:

Եսոնց ամենուն գումարը՝ հազար ինը հարիւր իրեք անձինք կընէ, որոնք վերը գրուած զանազան պատիժները կրեցին Քրիստոնեութիւնը ընդունելուն, կամ անոր կողմանէ աշխատելուն յանցանքին մէջ բռնուելուն համար:

Եսոյն ատարիին վերջերը՝ իրենց աստիճանը կորսնցընով Քրիստոնեայ պաշտօնատարներուն՝ որոնք հասարակ զինուորի կարգը անցած էին, քարէ տուն մը շինելու հրաման եղաւ: Ես տունը շինուելու որոշուած

տեղը հասնելուն, հրաման եղաւ որ քարերը կրելով շնչը տանին մէկ տարի մը լման . և իրենց վերակացուները կրոնադատէին ամէն օր անխնայ աշխատելու, առանց իրենց բաւական ուտելիք կամ հազգուստ մը տալու : Այս նեղութիւններուն մէջ ելող Քրիստոնեաներուն՝ որոնք առանկ թշուառութեանց ենթակայ եղան և իրենց աստիճանէն վար ձգուեցան, անկէ ետեւ իշրենց թշնամիներէն նախատական մասնաւոր անուն մը տրուեցաւ, որ ֆրագուէիին առանց կրօնքէն չախորժիլ կը ցուցընէ : Անոնք թափէիանորուն կ'ըսուէին . որ ըսել է, «Անքանը՝ որուն նմանիլ պէտք չէ» :

### ՏԵՐԱԿՈՎԱԿԱՅԻ ՕՐԸ ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼՈՒՆ ՎՐԱՅՈՎ

Այս Անդինու Հետու Անդդէայէ արդարութեան արքանին առաջնուն Դաստիարակութեան ամենահայտնի երեսներէն ու իրաւումնեան հեն է, իր նուռակերուն գրած նամակներուն հէջ իրակին առաջն պահելուն վրայով հետքեւու ծանօթութիւնները բուռուծ է : Այս յուռածն նէ անանի մարդուն մը կիսյութենէն՝ որուն իմաստութեան և մատուր ժարուց կողմանէ ունեցած համարումը այնպատճ հաստրակաց թանօթն է Երրորդայէ մէջ, մը ընթերցողն ներուն ու օգտակար ներդորժութիւն մը ունենայ :

Երկնից Ասուածը մեր հասարակ գործառնութեաններուն համար վեց օր թողուցած է, ու իրեւ տուրք մեղի փոխ տուած ժամանակին եօթներորդը իրեն սեպհականած օրուանը վրայ խորհրդածութիւն ընելով, ասիկա աւելի աղէկ պիտի հասկընք թէ՛ յաւէտ մեր շահուն համար է քան թէ իրեն :

Այսն զի ասիկա մէկ ստոյգ ճշմարտութիւն մըն է, թէ ուրիշ ատեն մը՝ Աստուծոյ ծառայութեանը մէջ ու իր պատոյն համար և իր կամացը համաձայն անցուցած ատեննէս աւելի աղէկ, ու մեղի աւելի շահաւոր կերպով չենք գործածեր . և թէ շատ գէշ է այն մարդուն բնութիւնը

որ շատ բան մը կը սեպէ եօթը օրին մէկը Ենոր ծառայութեանն ու պատոյն նուիրելը, որն որ իրեն չէ թէ եօթներորդ օրուան կեանքը կու տայ միայն՝ բայց մնացած վեց օրն ալ իր հասարակ գործառնութեանն ու գործածութեանը համար : Չեղի մէկ ճըշմարտութիւն մը պիտի իմացընեմ՝ որ քառասուն տարուընէ աւելի ըրած փորձառութիւններս հաստատ սորվեցուցին ինծի : Յիսուն տարիի մօտ է որ գործի մէջ եմ, և ան ալ ծանր ու կարեոր գործ՝ որչափ որ մարդու մը ուժը կրնայ տանիլ, ու ձեզ ապահովցընեմ՝ որ բնաւ երբեք կոյր նախանձաւորութեան, կրօնամութեան և սնապաշտութեան հակամիտութիւն ունենալու ենթակայ չեղայ : Բոլոր աս ատենը՝ մէջ ջանքով դիտեցի իմ ու իմ գործոցս մէջ աս իրեք բանները :

Եռաջին . թէ երբոր Տէրունական օրուանը մէջ աշխարհային գործ մը յանձնառու եղայ ընելու, (որ բացարձակապէս և անհրաժեշտաւ հարկաւորութիւն չուներ, ) ան գործը բնաւ արդիւնաւոր չեղաւ կամ ինծի չյաջողեցաւ : Եւ ոչ այսափ միայն, այլ և՛ թէ որ ան օրը մարմնաւոր գործի մը վրայով նախապատրաստական խորհուրդների միայն, կամ անոր վրայով մարես անցընէի, որ ետքը ընեմ կամ զլուխ հանեմ ու թէ և աս նախապատրաստական խորհուրդը ըստ ինքեան արդար ու համեստ ալ ըլլար ու յաջող ալ երենար անոր զլուխ ելլելը, 'ի վերայ այսր ամենայնի միշտ յասէս կը զրկուէի՝ կամ ան գործը ամեննեին չիրնալով կատարել, կամ վախճանը չյաջողելով . անանկ որ գրեթէ իմ կողմանէս մէկ առած մը եղած էր՝ ան օրը աշխարհային գործի մը վրայով ինծի թախանձելու ատեննին պատասխանել որ՝ եթէ գործին չյաջողելը կ'ուզեն, թողլ ան օրը իմ ան բանը ընելը վրաս առնելս խնդրեն : Ու ասիկա ես այն չափ աղէկ դիտեր էի որ՝ մինչեւ անգամ աշխարհային բանի մը վրայով խորհելէն ալ կը վախճայի ան օրը . վասն զի ան օրուան ըրած որոշումներս անյաջող կ'ըլլար, կամ ակնկալութիւնս պարապը կ'ելլէր :

Երկրորդ . թէ որչափ որ աւելի ամուը կապուեցայ Տէրունական օրուան պարապութիւններուս, այնչափ ալ աւելի նոյն շաբթուան մէջ պարապած գործքերս յա-

ջող կ'երթային ու երջանիկ կ'ըլլայի ։ ա-  
նանկ որ ան օրուան ամուռ կամ թուլ բրո-  
նելէս շիտակ կը տեսնայի ու ճիշդ հաշեւ կ'ը-  
նէի գալու շաբթուան մէջի աշխարհային  
յաջողութիւններս :

Երրորդ ։ թէպէտ և իմ ձեռքս ու միտքս  
Ծնդդիոյ մէջ եղած որ և իցէ ուրիշ զբաղած  
մարդու մը չափ լցցուն էր միշտ աշխարհա-  
յին գործքերով ։ թէ գատաւոր ըլլայէս  
առաջ և թէ ետքը սակայն բնաւ ժամա-  
նակի կարօտ չէի իմ վեց օրուանս մէջ լմըն-  
ցընելու ։ և ինքնինքս՝ կատարելիք գործքե-  
րուս պատրաստ ընելու ։ թէպէտ և ըովէ  
մ'ալ Տէրունական օրէն չէի խորեր ։ թէ  
ուսմամբ և կամ թէ ուրիշ կ'երպով պատ-  
րաստութիւն տեսնելու համար :

Բայց ընդհակառակն, երբոր աս օրը խո-  
րեցի աշխարհային գործի մը համար՝ գտայ  
որ Տէրունական օրը սուրբ բռնած տանենէս  
աւելի միաս եղաւ գործիս ։ ուստի երբոր շատ  
տարիներու փորձառութիւնը, շատ ուշագ-  
րութեամբ և զգուշաւոր դիտողութիւն ը-  
նելով բացարձակապէս որոշել տուաւ ինծի  
որ՝ բնաւ Տէրունական օրը ասանկ կ'երպով  
մը չխորեմ ։ և հիմա երեսուն տարիէն աւե-  
լի է որ սուրբ կը պահեմ նոյն օրը ։ Ես  
պատմութիւնը շատ հաստատ կ'երպով ու  
փորձով ալ ստուգուած է ։ և ևս հարիւրա-  
ւոր մարդոց իմացուցեր եմ ասիկա ։ ու հի-  
մա ալ ձեզի կ'իմացնեմ յուսալով որ աղէկ  
տպաւորութիւն ընէ ձեզի :

ԴՆՔՁՒՆՔԸ ԿԱՌԱՎԱՐԵԼ ։ օհութ՝ պէտք  
է որ ամէն չանք ՚ի դոս գտէն, որ իրենց զաւկներնուն ի-  
րենք զերենք կտաւալուիլ սորվեցնեն ։ օնէ որ տղան բար-  
կասիրտ է, աղնիւ կերպով մը ու համերաւութեամբ սորվե-  
ցնելու է անոր՝ որ իր բնութիւնը զափէ ։ օնէ որ ագահ և  
անկուշ բնաւորութիւն ունի, առաւածենուութիւնը կամաց  
կամաց լշակերտ է անոր սրտին մէջ ։ օնէ որ անձնաւէր է,  
աղնաւամութիւն սորվեցնելու է անոր ։ օնէ որ մայձու է,  
խօստելու է որ ան բնութիւնը ձգէ, քաջալերելու զինքը որ  
զուարթ բնաւորութիւն ունենայ ։ օնէ որ ծոյլ ու զանդաղ  
է, աշխատասէր ըլլալու վաժեցնելու է ։ և անանկ կը թելու-  
է որ մեծամեծ ու զժուարակիր պարտաւորութիւններն ալ  
յօժարամտութեամբ կատարէ ։ օնէ որ հապատութիւնը տիրէ  
վրան, և իր հնազնողութիւնը ակամայ կամծը կատարէ,  
սանձելու է անիկա՞ կամ սիրատով կամ պատիժով ։ Կարճ  
խօսով ։ ծնողը զաւկըներնին անանկ վարժեցնելու են՝ որ  
իրենց վրայ տիրած չար բնաւորութիւններուն յալթեն :

ՅԵՍՈՒՏ ՈՒ ԹԻՒԽ ԵՒ ՄԱԼՈՐՈՒԹԻՒԽ

Ճշմարտութիւնը մալլրութեան գէմ գել-  
թափ մըն է ։ մալլրութիւնը հոգին կ'աղտեղէ ։  
Մարդ մը կարելի է որ թունաւորուելով մեռնի,  
ինչպէս նաև ատրճանակով մը սպանուիլին ալ  
կարելի է ։ և Ճշմարտութիւնէն ՚ի զատ ի՞նչ կայ  
որ մալլրութիւնը մէկդի վանէ ։ Ծնչափ մարդոց  
մալլրութեան որոգայթին մէջ ի յնալրն պատ-  
ճառը աս է որ՝ կամ չեն գիտեր Ճշմարտութիւնը  
կամ չեն սիրեր ըանիկայ ։ Ի պատիւ Ճըշ-  
մարտութեան ըատ բաւականին բնաւ չենք կրնար  
գրել ։ Ճշմարտութիւնը մեր հաւատքին  
հաստատութիւնն է ։ մեղի կրօնին ճիշտ գա-  
ղափարը կու տայ ։ ու կրցուցընէ թէ ի՞նչ  
բանի հաւատալու ենք ։ մնէ որ վերցընէս Ճըշ-  
մարտութիւնը, մեր հաւատքը միայն երեւակայ-  
ական բան մը կ'ըլլայ ։ Եկեղեցւոյ թագին  
վրայի ամենէն աղէկ ծաղկիկը Ճշմարտութիւնն  
է ։ մեր հոգիէն աւելի ծանրագին բան մը չու-  
նինք ։ Սասուծոյ յանձնելու ։ և ոչ ալ Կնքը՝ իր  
Ճշմարտութիւններէն աւելի ծանրագին բան մը  
ունի մեղի աւանդելու ։ Ճշմարտութիւնը  
պատւոյ մէկ նշան մըն է ։ ու մեղ մոլար եկե-  
ղեցին կ'որոշէ ։ ինչպէս որ համեստութիւնը՝  
առաքինի կինը կ'որոշէ ։ Կարճ խօսքով, Ճշմար-  
տութիւնը աղզի մը պատուարն է ։ Գրուած  
է որ՝ ՚Կտացիք ։ (որոնք Ճշմարտութեան դրօ-  
շակիններն էին, ) թագաւորութիւնը ուժովցու-  
ցին ։ ը Առաջ ։ Ժան ։ 17 ։ Ճշմարտութիւնը  
Հռովմայ մայրաքաղաքին հետ կրնայ բաղ-  
դատուիլ որն որ ամենէն զօրաւոր տեղ մըն է,  
կամ Դաւահիթի աշտարակին՝ որուն վրայ հա-  
զար վահան կախեց ։ Երդ ։ դ ։ 4 ։ Օօղքենն  
ու նաւատորմիջները Ճշմարտութեան չափ չեն  
կրնար ուժովցնել մեղ ։ Աւստի թէ որ Ճշմար-  
տութեան սաստիկ նախանձախմնդիր չըլլանք ։  
ալ ինչ բանի ըլլալու ենք ։ Հրաման ունինք որ  
մինչեւ մահուան կէտը, անդամ մը սուրբերուն  
տրուած հաւատքին վրայ չենք ընենք հաստա-  
տուն կինալր ։ Յուր ։ 3 ։ մնէ որ Ճշմար-  
տութիւնը անդամ մը կորսնցնենք, սա վերտա-  
սութիւնը կրնանք իրաւամբ մեր վրայ գրել  
իրեւ տապանագիք թէ և մեղմէ փառքը վեր-  
ցաւ ։ ա մնադ ։ դ ։ 21 ։

ՔՐԻՍՈՒՆԻ ՀԱՎԱՐԱԿԱՆ

ՄԱՐԴԱՍՈՒՐՈՒԹԻՒՆ

Ամենեն ընդդիմութիւն ըըլլուիր որ՝  
Ըստուածաշունչին վարդապետութիւները,  
մարդուն սրտին մէջ աձնանուեր մարդա-  
սիրութիւն մը հաստատելու համար գըր-  
ուած են. բայց ուրիշ ապացոյց մ'ալ կայ  
որ՝ մարդոց մարդասէր ու բարերար ըլլալ-  
նին կը կամի Ըստուած : Եսիկա աս բանով  
յայտնի կրտսենուի որ՝ Բաղրատ ալ-արդին ՀՀ  
Եւ-Երանակը դարձելու ժորժը՝ հարդոց  
յանձնուած է :

Ես ճշմարտութիւնը որչափ ալ որ ծաշ-  
նօթ է մեղի, ու մենք ալորչափ որ անոր վր-  
բայօք քիչ խորհելու սովորութիւն ունինք,  
տակաւին ասկէ աւելի հիացման արժանի  
բան մը չկայ՝ բարոյական և քրիստոնէական  
ճշմարտութիւններուն բոլոր ասպարեզնն  
մէջ : Մարդկային ազգը մեղաց մէջ մեռած  
ու կորսուած էր : Ըստուած իր գթու-  
թեամբ անոնց փրկութիւնը պիտի պատ-  
րաստեր . բայց ինչպէս . անսահման գիտով  
մը անոնց մեղացը քաւութիւն կ'ընէ, իր  
միածին Որդին տալով որ անոնց համար  
մեռնի : Ու հիմա՝ ալ ինչ աւելի ընելիք  
կըմնայ : Հաղար ութ հարիւր տարի աւելի  
ետ կ'երթանք . քաւութիւնը եղած կը գրտ-  
նանք . բայց աշխարհքը ան եղած բանը  
չփատէր ու փրկուած ալ չէ : Տակաւին ա-  
ռաջուան պէս մեղաց ու խաւարի մէջ է :  
Փրիստոսի միայն մեռնիը , մէկ հոգի մըն  
ալ չպիտի փրկէ : « Ըստուած այնչափ սիրեց  
աշխարհը որ իր միածին Որդին տուաւ որ ով  
որ անոր հաւատայ չկորսուի այլ յաւիտե-  
նական կեանք ատանայ » : « Բայց ի՞նչպէս  
պիտի հաւատան անոր՝ որուն վրայով բան  
մը չլսեցին » : Մարդիկ գիտնալու են թէ  
Փրիստոս մեռաւ . և աս ճշմարտութեանը  
նկատմամբ , անոնք զգմանը և հաւատքով  
անոր ապաւինելու վիճակին բերուելու են .  
ապա թէ ոչ կորստեան մէջ կը մնան :

Ըստուած ուրեմն իր Որդին պարապ տե-  
ղը մեռնելու տար պիտի : Բայց Փրիստոս  
մեռներէն յարութիւն առած ըլլալով՝ աշ-  
խարհիս վրայ չմնար որ ամէն ազգերուն մէջն  
երթայ , որ անոնք՝ որոնց համար որ ինքը  
մեռաւ , ապաշխարութեան ու Եւետարանին  
հաւատալու կանչէ . և յշրկինքը համբարձած

ըլլալովն ալ իր հրեշտակները չնրկէր կենաց  
ճամբան սորվեցնելու համար : Բայց այս  
գործը՝ որ կամ կատարուելու է , կամ թէ  
մարդիկը կորուելու են , ուրիշներուն  
ձեռքը յանձնուած է :

Ըստուած մարդոց փրկութեանը համար  
իր Որդին մեռնելու տուած ըլլալով ; կը  
թողու իր շնորհացը հրաւերը զիտցընելու  
գործը . այսինքն , կը թողու այս փրկութիւ-  
նը ազդողական ընելու գործը , ընդհանրա-  
պէս մարդու ձեռքով կատարուելու . անիկայ-  
մարդուն կամաւոր գոծողութեանը կը ձգէ :

Ես բանը առանց հեղինակութեան խօսք  
մը չէ : Ըստուած ներշնչեալ առաքեալի մը  
ձեռօք այսպէս ձեռնակութիւն կ'ընէ : « Ու  
որ Տէրոջը անունը կանչէ պիտի փրկուի :  
Ուրեմն ինչպէս պիտի կանչեն անոր՝ որուն  
որ չչաւտացին . կամ ինչպէս պիտի հաւա-  
տան անոր՝ որուն վրայով բան մը չլսեցին .  
կամ ինտո՞ր պիտի լսեն՝ առանց մէկուն քա-  
րողելուն : Վրիստոսի մահը ազգաց փրկու-  
թեանը օգտակար ըլլալը , Եւետարանը անոնց  
մէջ քարոզուելով կ'ըլլայ . ու աս գործնալ  
Ըստուած մարդոց յանձնեց : Ինքը աս բանը  
ընելը մարդոց ձգեց , ու աս գործը կատա-  
րելու տակնին՝ անոնք զանազան զոհեր  
ընելու են , և իբրև թէ իրենք իրենց մէ-  
գուրս ելլելու և ուրիշներուն համար ապրե-  
լու են : Ըստնկ էր նախկին աշակերտներուն  
ատենը , ու հիմա ալ ակաւին՝ ասանկ է :  
Մենք Եւետարանը աշխարքին չենք կրնար-  
տալ , քանի որ ինքզինքնուս համար միայն  
կ'ապրինք : Ենձնուրբաց աշխատութիւներ  
կը պահանջուի , և զոհեր ընելու ետեւ ըլլ-  
ալու ենք : Ուրեմն յայտնի է որ՝ Ըստուած  
կ'ուզէ թէ մարդիկ մարդասէր ըլլան . Ենոր՝  
մարդոց ճիշդասանկ ըլլալնին ուղելը այնքան  
ստոյգէ՝ որ աս բանին նկատմամբ , ինքը ա-  
նոնց բարոյական բնութեանը լըայ փոփո-  
խութիւն մըն ալ ընելու միտքը դրած է . որ-  
քան որ իր Միածին Որդին մեռնելու տա-  
լու գործին կատարուելը տեսնելն ալ միտքը  
դրած էր : Վասն զի մարդս պէտք է որ սորվե-  
ապրիլ ու աշխատիլ և ուրիշներուն աղէկու-  
թեանը համար բան մը զոհել . ապա թէ ոչ  
Ըստուծոյ անսահման շնորհացը գործը ; իր  
Որդւոյն զոհ ըլլալը , ինչնպատակի օգտակար  
ըլլալու համար որ եղաւ՝ անոր չհամնիր :

ՀԱՅՈՒՄՐԵԿԻ ՄԻՋ ԽԱԶԱՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՒՄՐԵԿԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՌՈՒՆՆԵՐ

1. Պէտք է որ ստոյգ գիտնաս թէ՝ օրուանը մէջ քու կամքիդ դէմ բան մը կըրնայ պատահիլ, ուստի նայէ որ պատրաստ գտնուիս :

2. Տանը մէջիններուն ամէն մէկը մէկ գէշ բնաւորութիւն մը կրնայ ունենալ, ինչպէս նաև դուն ալ ։ ուստի չափազնց բաներ յուսալու չես անոնցմէ :

3. Տնեցոց ամէն մէկուն բնաւորութիւնները սորվելու ես :

4. Ծնտանեաց մէջ գտնուող ամէն մէկուն անանկի մը պէս նայելու ես, որուն համար որ Վրիստոս մեռաւ :

5. Եթէ որ և իցէ մէկուն աղէկ բան մը պատահի, անոր վրայ ուրախնալու ես :

6. Երբ որ դուն քեզ հակամիտեալ կը գտնաս գիմացինիդ բարկութեամբ պատասխանելու, ազօթքով սիրտդ առ Աստուած վերցըննելու ես :

7. Թէ որ հիւանդութեան, յաւադարութեան, կամ տկարութեան մը պատճառաւ գիւրագրգիռ ըլլալդ հասկընաս, ան ատենը պէտք է որ դուն քու անձիդ վրայ շատ զայշ ըլլաս :

8. Ուրիշներուն ալ աս տեսակ նեղութեան մէջ ըլլալդ դիտելու ես. և սիրով ու կարեցութեամբ իրենց վիճակին յարմար բանի մը խօսքը անոնցմէ խնայելու չես :

9. Պէտք է ամէն ամենափոքր պատեհութիւնները անգամ ձեռքէ չհանես՝ որոնք կրնան ուրիշներուն հաճոյական ըլլալդ, ու սիրտերնին նեղացընող ամենափոքրիկ բաները անգամ բոլորովին մէկի ընելու ես :

10. Որ և իցէ բանի վրայ զուարթ աչքով նայելու ես, և ուրիշներուն ալ քաջալերութիւն տալու ես :

11. Ապասաւորներուն չետ քաղցրութեամբ խօսելու ես. և երբ որ իրենք աղէկ բան մը ընեն, պատեհութիւն մը գտածիդ պէս գովելու ես անոնք :

12. Բոլոր մանր մունք զուաճութիւններու մէջ, դուն քեզ ամէնէն ետքը ձգելու ես :

13. Գանք ընելու ես և անանկ կակուղ պատասխան մը տալ, որ բարկութիւնը ետ դարձընէ :

14. Երբ որ կը ցաւիս անլայել խօսքի

մը կամ գործքի մը համար, զարձիք ու դուն քեզի հարցութէ՝ “արդեօք ես ալ շատ անգամ աս նոյն պակասութեանը մէջ չգտնուեցա՞յ, ու ներում չառի՞” :

15. Խօսակցութեան մէջ քեզ վեր վերցընես. այլ նայէ որ, ուրիշները առաջ բերես :

16. Պղտիկներուն չետ անուշ և ազնիւ կերպով վարուելու և անոնց յարգութիւն ցուցունելու ես, յիշելով որ դուն ատենօք անոնց պէս էիր :

17. “Այէ որ բնաւ ուրիշներ վրայ գաւողութիւն չընես. այլ ասոր հակառակ որչափ որ կրնաս բանը աղէկի մէկնէ :

18. Օրուանը մէջ վայելած անհամար բարիքներուդ հետ բաղդատէ ան նոյն օրուան չնչին նեղութիւնները :

## ՉՈՐՑԱԾ ԹՁԵՆԻՆ

“Ի՞նչպէս շուտով չորցաւ թղենին” ըստին աշակերտները՝ երբոր Փրկչին անէծքին արդիւնքը ահան :

Երբոր Աստուծոյ անէծքը մարդու մը վրան կուգայ, անիկա շուտով կը չորնայ։ Կրնայ ըլլալդ՝ իր սորտուածուին վրայ, կամ իր աս կեանքիս համար ըրած խորհուրդներուն վրայ գայ: Բնութեան զօրութիւնները՝ Աստուծոյ ձեռքն են: Ալեկոծութիւնը՝ կրնայ անոր նաւը ծովերուն տակը թաղել, կրակը՝ իր վաճառքներուն մթերանոցը այրել, հեղեղները՝ իր աշխատութեանը արդիւնքներուն բոլորը աւելել տանիլ, և ան որ՝ իր հարստութեանը մէջ եղած ատենը ամբարտաւանութեամբ ըսաւ թէ՝ “յաւիտեան պիտի չսասանիմ”, աղքատութեան հանի: Աստուծոյ անէծքը՝ մարդուն ամենէն խելացի կարծած հնարիները, կայծակը՝ ծասի մը զարնելուն չափ շուտ կըրնայ, աւրել ըլլայ:

Կրնայ ըլլալդ որ՝ իր ընդունեացը վրայ գայ: Աղօթք չընող ընտանիքի մը մէջի կուռք մը եղած տղան, կրնայ ըլլալդ որ առտուան ծաղեկի պէս շուտով կարուի: կամ թէ կեանքը բարեկարգ ընթացքի մը մէջ պահող շնորհքը երթալով՝ կենդանի մեռել ըլլայ:

Կրնայ ըլլալդ որ՝ իր մբարին վրայ գայ: Ան-

միտքը՝ որ բոլոր իր խորհուրդներուն մէջը բնաւ Վատուած չունէր, ան կարողութիւնները՝ որ մեղսալից բաներու գործածելու դարձուցեր էր, կրնայ ըլլալ որ՝ ալ կաըլ չըլլայ իր կամքովը առջի պէս ծռելու : Դատողութիւննը՝ կրնայ ըլլալ որ իր աթուէն գլորի, և կատաղի մոլեգնութիւննը՝ կամաւ Վատուածոյ անհնազանդ ըլլալուն տեղը բռնէ :

Կրնայ ըլլալ որ՝ իր խղճառնին վրայ դայ : Ու խղճառանքը՝ ալ այնուչետե գալու դատաստանին օրուանը վրայով իրեն խրատ չտայ . կրնայ ըլլալ որ՝ ալ արգելքներ չենէ դէպի ՚ի յուսահատութեան փոսը իր ըրած արագ ընթացքը զսպելու կողմանէ : Կրնայ ըլլալ որ՝ տաք երկաթով խանձուածի պէս ըլլայ : Կրնայ ըլլալ որ՝ ինքը զինքը տայ ստութեան հաւատալու, որ ինքը դատապարտուի :

Թող ամէն մարդ զգոյշ ըլլայ, առանց Վատուածոյ կամացը նայելու՝ մէկ որ և իցէ ճամբայ մը բռնելէն, կամ մաքին մէջ անանկ բան մը ճեացընելէն : Թող զգոյշ ըլլան ճշմարտութենէն խոտութելու համար իրենց մաքին կարողութիւնները գործածելէն . թող զգոյշ ըլլան իրենց խղճառանքին գէմ մեղք գործելէն, որ չըլլայ թէ Վատուածոյ անէծքը իրենց վրայ թափի : Խնչ կործանիչ բան մըն է Վատուածոյ անէծքը : Ո՞ւ կրնայ աս աշխարհիս մէջ անոր գիմանալ : Ո՞ւ կրնայ բոյոր յաւելտենականութեան մէջ անիկա կրել :

• ԱՌՈՉՉՈՒԹԵԿԱՆԸ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ . Դեղբը՝ ամենին չեն ըրբացըներ գէլ սովորութիւնները : Բոլըրովին անհրիմ բան է խորհիլ թէ՝ որ կրամնութեամի, զինւմոլութեամի, և ամէն կերպ չափազանցութեամի կեանք վարելով, իր մարմայն առողջութիւնը գեղեցրով պահպանէ : Որ կրամնութիւնը՝ և անխորի դել առնելը՝ սովին, սուրբին, և ժանուարահին կոտորածերէն աւելի մարդոց կեանքը կորսնցուցեր են : Ճաէ որ խրատ մտիլ ընել կ'ուզեն, սովորութիւններդ կանոնաւորէ, կիր՝ ու խոնէ առողջարար բաներ, շատ փարուկ անկողինի վրայ մի՛ պառկիր, ու զիշերը ժամանակին հանգչէ՛ և առուուն ալ կանուխ ելի՛ կանոնաւոր առանին : Ճաէ որ կրնաս մարմինդ ամէն օր պաղ ջուրով լուա՛, և հրւանդ եղած առնենդ ալ քու ճանչցած ամէնէն վարպետ բժիշկը կանչէ, և անդ ապսպարածը կատարէ շըշիք, և բնութեանը հտեւուլ եղիր :

## ԱՍՏՈՒԱՃԱՇՈՒՆՉԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ

Հասարակաց ժողովէն իւ մէջ որ Անոնքիոյէ մէջ Լորինողուրի տաղագին եղաւ, երեւելք գուղուն իւ հետեւեալ ճարդարակիւս և ճշմարէդ դիրուղը լիւնելուն ըլլաւ, Ասուուծոյ Խօսութը ամէն ժողովը լուսաց իրենց խօսութ լեզուովը արքեւուն վրայութ :

“ Ում գիտեր անանկ բան մը՝ որ մէկը կարենայ ընելու գրականութեան կամ գիտութեան մասին, բուն իսկ կրօնիքը գուրս ձգելով անոր մէջն՝ որպէս զի որ և իցէ ժողովրդոց կարող ըլլայ մեծագոյն պարգև մը ընծայել, Ասութը գիրքը իրենց խօսած լեզուովը թարգմանելէն աւելի : Վայրկեան մը նայեցէք ան զօրաւոր հետեւութեանցը, թէ որ այսպէս կրնամ ըսել, որ ասանկ գործ մը ժողովրդոց լեզուին վրայ յառաջ կը բերէ : Խնչ վսեմութիւն, ինչ արժէք, ինչ յարդ այդ լեզուին բառերուն . ան բառերն որ առաջ գրեթէ կ'երեար որ աստանդական կը ծփծփային՝ մարդոյս ամենաբարձր խորհուրդներն ու խորին զգացումները արտայայտելու բաւականութիւն ունենալով, բայց մինչև ան ատենը նիւթական և զգալի պիտոյքները միայն կրնան լեցընել : Ես բառերը բանուելով, ( թէ որ ներելի է ինձ այսպէս ըսել, ) ու Վատուածոյ խորհրդոցն ու երկնից գաղափարներուն հետ տոգորելով, և ետքը մարդոց սրտին մէջ պատասխան մը գտնելու խաւրելով, անոր ամենաբարձր գաղափարներն ու խորին զգածմունքները ան ատենը արտայայտեալ կը գտնէ : Եւ ան ատենը ինչ հիմն ձգեցիր աս ժողովրդոց քաղաքալիրթութեանն ու բարի կեցութեանը : Խնչ հիմն ձգեցիր անոնց մտքին լնդաձակութեանն ու սրտերնուն մաքրութեանը, և ան ամէն բաներուն համար, որնք որ բանական և խմացական արարածոց բարեկըթութիւնը յառաջ կը բերէն :

“ Ճաղղվուցոց Վատուածաշունչ տալը՝ անսնց բուն իսկ արմատին երթաւ ու ան մէքենան՝ գործ գնելէ, որ իրենց քաղաքալիրթութիւնն ու նրբութիւնը ինքնին յառաջ կը բերէ : Բայց

մասնաւորապէս մեզի կիյնայ հոս մտածել թէ՝  
բոլոր աշխարհ իսրկուած քարոզելներուն գործին՝  
Աստուածաշունչը ժողովը լուսած լվզուով  
թարգմանուելով որչափ օգուտ կ'ընէ ըսել կ'ու-  
ղեմ: Եսոր միջոցովը մեր քարոզելները յարձար  
գործիք մը ունեցած կ'ըլլան՝ որով իրենց գործը  
յառաջ վարելու և յաջողութիւն դանելու են: Եսոր՝  
յարգանօք խօսինք, ճշմարիտն ալ ան  
ըլլալուն համար՝ որ աս լիզուներուն թարգ-  
մանելով Սուրբ Դիմիքը, պատրաստած կ'ըլ-  
լմնք ան գործիքը՝ որ անով ինքն Հոգին Սուրբն  
ալ կը զեղանիներդորձելու ան սուրբը՝ որ անով  
Դիմիքը մեղաւորներուն սիրալ կը ծակէ, ան կրա-  
կը՝ որ անով մեղաւորներուն ամենէն կարծը  
սիրտերը կը հալեցնէ, ան մուրճը՝ որ անով բոլոր  
հակառակութիւնը կտոր կտոր կը մանրէ: և  
մենք բացինք ան ջուրերը, սրբարանին ան կեն-  
դանի ջուրերը՝ որ աս անապատացեալ և մեղ-  
քով ապականուած աշխարհին վրայ կը սփոթ,  
և Աստուածոյ Դիմախտին ծաղկն ու գեղեցու-  
թիւնը կ'ընծայէ:

## ՀԵՇԱՆՈՍՈՒԹԵԱՆ ՏԿԱՐԱՆԱԼԵ

Կետեալ քաղուածը Պոմակէ հրատաւ-  
րակուած օրագիրէ մը առած եմք, որ շատ  
աղէկ կերպով կ'ստորագրէ մաքի մշակու-  
թեան վիճակը՝ որ ատեն որ Վրիստոնէու-  
թեան սկզբունքներուն հետ միանայ: Հնդ-  
կաստանցօց հին աւելորդապաշտական արա-  
րողութիւնները կործանելու վրայ են: Եւ-  
բոպական կրթութեան, և Վրիստոնէական  
սկզբանց շարունակ յարձակմանցը դէմք դի-  
մանալու չափ ուժ չունին: Ասոնց երկուքն  
մէկուն ազգեցութեանը ներքեւ եկոզները՝  
որդւոց որդի յաջորդաբար ընդունուած, և  
ժամանակին նկութեամբը պատիւ ստացած  
դրութեանը, միամտօրէն ալ չեն կրնարյա-  
րիլ: Կամ աս գարուս ողին՝ զանոնք իրեն  
անդիմադրելի ուժովը, իր դիւթական շրջա-  
նին մէջ կը քաշէ, և կամ Աստուածոյ ճշմար-  
տութիւնը իրենց իմացական և բարոյական  
խաւարը կը վանէ, ու աս երկու տարբեր  
փոփոխութիւններէն մէկուն տակ կը մտնան:  
Հետեաբար՝ հիմա այն որոշէ կէտը հա-  
սած է: Անոնցմէ ոմանք՝ որ Եւետարանին  
տեղեակ եղան, սկսան աչքերնին բանալ ու  
անոր պատուականութիւնները տեսնել, և

ասոնցմէ շատերն ալ, Հեթանոսաց Առաք-  
եալը՝ Եղրիպատախն առջել եղած ատենք  
անոր վիճակը ինատոր որ էր, գրեթէ ասոնք  
ալ նոյնալէս Վրիստոնէայ ըլլալու համու-  
ռածած են, և իրենց խղճմանքին ու աշխար-  
հին մէջ տեղը կը վարանին թէ որու անձ-  
նատուր ընկն ինքզինքնին: Աստուածոյ թէ  
չէ: Ուրիշներն ալ՝ որ բաւական դիտութիւն  
ստացան, Պիւրենեան առասպեկներն ու սնա-  
պաշտական սովորութիւնները տեսնելու, ա-  
ռանց Եւետարանին «Ուղիղ վարդապետու-  
թիւններուն» Ճիշդ գիտութիւնը ստանալու,  
հպարտութեամբ ուռած են՝ որ և իցէ կրօ-  
նական հեղինակութիւնը մերժելու ինքզինք-  
նին կարող սեպելով: ու Վրիստոնէութիւ-  
նը՝ իր երկնային հաղորդակցութիւններուն  
միակ և ընդհանուր հպարտակութեան պա-  
հանջումը ընելով՝ իրենց արհամարհական  
ատելութիւնը կը գրգռէ: Աս երկու մէկ մէ-  
կու հակառակ զօրութեանց դիմացը եկող,  
և իրենց կրօնքին սիրով յարելնին անկեղծ  
պահելու կարող եղող Հնդկաստանցիք շատ  
քիչ են:

Հիմա Հնդկաստանցիք իրեք դաս բաժ-  
նուիլ սկսան: Առջի յիշուած երկու դա-  
սը օրէ օր աւելնալու վրայ է, ու միւսը  
պակսելու: «Եյն առջի յիշուած դասը  
շատ հետաքրքրական է, մասնաւորապէս  
անոր համար որ՝ Եւետարանական աշխա-  
տութիւններու նկատմամբ եղած արդեանցը  
վրայօք ունեցած յոյսերնիս կը կենացնացնէ:  
Երկրորդն ալ թէպէտ քիչ հետաքրքրական  
չէ՝ բայց մեր գութը կը շարժէ, որ անոնք  
Յիսուս Վրիստոսի մէջ եղած ճշմարտու-  
թիւնը՝ պարզ, խոնարհ և աշխայժ կերպով  
մը փնտուելու տեղը՝ որն որ միայն իրենց ան-  
մահ հոգիներնուն փափաքը կը նայ յարգե-  
ցընել, անփոյթ թեթեամտութեամբ մը  
բոլոր կրօնական սանձերը մէկդի նետեցին,  
ու իրենք կրօնքի նորոգիչը ըլլալու համբաւը  
վաստիելու համար՝ կ'աշխատին Հնդկաց  
կրօնքէն և Վրիստոնէութենէն անանկ բա-  
ներ ժողուելոր՝ իրենց ծանծաղ միտքերնուն  
ընդունակութիւնը կը նայ յօրինել, ու ա-  
նանկ կաղապարի մէջ խօթել, որ ասոնց ը-  
սածին նայելով՝ «Արդիւալ Հնդկական գր-  
բութիւն մը ըլլայ: Աս կարգին մէջ գըտ-  
առածներէն ոմանք՝ որոնք կ'ըսուի թէ

ըստ մեծի մասին Խլֆինսթօն ըսուած Շնկերութեան մոլորեալ աշակերտներէն են : Կ'երեայ թէ ընկերութիւն մը կազմած են իրենց մէջ՝ անուանեալ «Շնկերութիւն լուսաւորութեան ճշմարիտ կրօնին», և կործանման մոլար կրօնի» . ու Մարաթիի լեզուով ամսական տետրակ մը հրատարակել սկսան , Քրիտոնէութիւնը խափանելու նպատակաւ : Աս տետրակը՝ որուն յատկութիւնը ըստ բաւականին աղէկ կը ցուցընեն մուրացածոյ ու խարեական լուսաւորութեանը որպիսութիւնը , կ'ըսուփ Բրոպօ՛ չանդրագաւածու . այսինքն՝ գիտութեան , կամ արթնութեան լուսնին ծագումը . տպագրութիւնը պատուական է , բայց թուղթը ստորին . ու շատ ալ աժան գնով կը ծախուփ . ստորագրութեան պայմանը եռամսեայ ըքածեն՝ որպէս զի աղքատները կարող ըլւան ծախու առնելու : Կ'երեայ թէ մի միայն ուրիշ տետրակի մը նորոգութիւնն է աս գործը՝ որն որ քանի մը տարի առաջ , Քրիտոնէութեան դէմ նոյն հակառակութեան ոգւովը կը հրատարակուէր , ու քիչ մը ատեն տեւելէն ետև ինքնիրեն մարեցաւ ու վերջ եղաւ : Աս հիմակու ողորմելի գործն ալ միւսէն աւելի բաղդաւոր վիճակի մը հանդիպելը չկը նար գուշակուիլ , թէ որ առջե հրատարակուած թուղյն օրինակէն յաջորդ թերթերուն ալ ինչ ըլլալիքը մակարենք :

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԿԱՆԵՐ

Զարին դէմ բարիք հասուցանողը , ծառի մը կը նըմանի՝ որ իրեն քար նետողները անդամ իր հովանին տակը կ'առնէ և իր պատուղը անոր կ'ընծայէ :

Դիտունի մը տեղ կ'անցնի ան մարտը՝ որ իմաստութիւն փնտուելու ետքէ է . բայց երբ որ կարծէ թէ գտած է , յիմար է ինքը :

Եղբանցից մէջ ինկած անդամանուկը՝ բնաւ իր արժէքը չփորմցներ , և սաստիկ հովերուն բոնութեամբը մինչեւ երկինքն՝ ի վեր ալ եւլած փոշին՝ տակաւին նոյնպէս չշնչն բան մըն է :

Իր բեռը վերցընու էլք , մարդիկները փառատող առնելին աւելի արժէք ունի :

Համերութիւնը անանկ ծառ մըն է որուն արմատը թեպէտ լեղի է , բայց պառուղը շատ բաշըր է :

Տասը աղքատ մարդ կնան հանգստութեամբ մէկ խարիք քայ քնանաւ , բայց երկու թալաւոր թէ և աշխարհիս մէկ քառորդ տեղին մէջ ալ բնակին , տակաւին խաղաղութեան մէջ չեն կնար մաւալ :

## ԽԱՅՏԻՆ ԶՈՐՈՒԹՏԻՆԵՐ

Ո՞չ ժողովրդոց նուիրած զոհերը , ո՞չալքահայից պաշտամոնները կլնար լինաւ երբեք մեղքերը վերցնել : Խոհական հէն թանոսը՝ իրեն զարդարուած տաճարէն և մոլթած զոհը նուիրելէն ետև երբոր կը դասնայ , իր դաստավարութեանը ծան բութեանը ներքեւ ճշնշուած խղճմտանքին ձեռքէն կ'աղաղակէ . Ո՞չ երանի թէ գիտնայի թէ ուր կրնամ անիկա գտնալ : Հըրէան ողջակեզին սեղանէն , ու քաւութիւնը ընող բահանային բովէն դարձողն աւտակաւին կ'աղաղակէ . Տէրոջը առջեն ինչով երթամ : Հնդիկ մայրը՝ անորդի դառնալով ան դետէն , որն որ իր տղեկը կրլեց , մեղքին խայթոցը տակաւին թիւթեցածը ըլլալը կը զգայ : Հնկրնատին տաճարը գայող ջերմեռանդ ուխտաւորը՝ որ ան կուռքին անիւին տակը մարմինը ճրմած է , բայց ո՞չ վէրքը շատ աւելի ինունկէ . պատուալած արին թաթախ է զած զիակէն իր հոգին հիմա աղատուած է , բայց տակաւին անմաքուր ու բոլոր իր յանցաներներուն մէջ շատութոյ առջեր կը ներկայանայ : Ասանկ է նաև երկրին մէջն ամեն տեղ ալ աս օրուան օրս : Մարդ մը յանցաւոր ինըմնանքի ցաւը ըղգալով Գողգոթային զատ ամէն տեղ կը նայ երթալ , ու իր ցաւին աղատութիւնը չկը նար գտնալ : Բայց թողլ լսէ՝ որ շատուած անանկ սիրեց աշխարհը որ իր մէկ հատիկ միածին Որդին տուաւ , որ ամէն ովլ որ անոր հաւատայ չկըրսուի , այլ յաւիտենան կան կեանք ունենայ . Թողլ փրկութեան համար ինքնինքը Ծնոր յանձնէն , որուն արիւնը ըրուր մեղքերէ կը մաքըլէ . Թողլ Ըւետութանին կանոնները սորվի ու գործածէ , և իր հոգւոյն մէջ կը զգայ որ իր մահացու վէրքը բժշկուած է : Մատութոյ հաղաղութիւնը որ ամէն մորքէն վեր է , իր հոգւոյն մէջը կը թափի : Հողին վկայութիւն կուտայ իր հոգւոյն , որ շատութոյ հետ հաշտուած է : Մէջքին իշխանութենէն , կիրքերուն բաւաւորութիւնէն , դգայական և անյաւոր աշխարհի մը հայատակելէն , վիրատորեալ հոգւոյն անտանելի ցաւերէն , Որդին աղատ ըրաւ զինքը . և իրաւ որ ինքը աղատ է : Հաւատաքով արդարացած ըլլալը , շատութոյ հետ խաղաղութիւն ունի մեր Տէր . Յիսուս Քրիստոսին ձեռքովը , և անպատմելի ու կառաւածութիւնին աւ կառաւածութիւնին :

ՀԻՆ ՀԱՅ ՌԵԲՈՒՆ

ՄԵԿ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՎԱՔ

Սեղանակ մը՝ ճգնաւորին մէկը անտառ  
մը տարաւ, և ուր տեղ ծեր մարդ մը  
տեսաւ, որ ծառի մը ոստեր կը կտրէր բեռ  
մը փայտ լնելու համար : Երբոր շատկեկ  
եղաւ, անոնք մէկտեղ կապեց և փորձեց  
որ կրնակը առնէ ու տանի . բայց տեսնեւ  
լովոր շատ ծանր եղեր է կը կին վար զբաւ  
ու աւելի փայտեր կտրեց, և դիզած բեռ  
ու կապեց ու կը կին փորձեց որ կրնակը  
վերցնէ տանի : Ըս բանը քանի քանի ան  
գամ կրկնեց՝ միշտ բետին վրայ աւելցնելով,  
թէ և ամեն անգամ ոչինչ տեղը կ'աշ-  
խատէր բեռը գետնէն վերցնելու համար :  
Կոյն ատենը, ճգնաւորը զարմանքի մէջ  
մնալով աս մարդուն յիմարդութեանը վրայ  
ուղեց որ հրեշտակը բացատրէ ասոր ինչ  
նշանակելը : «Դուն կը տեսնեն» ըստ հը-  
բեշտակը ասա յիմար ծեր մարդուն օրինա-  
կովը՝ ան մարդոցը ճիշդ նկարագրութիւ-  
նը, որոնք իրենց մեղքին ծանրութիւնը զգա-  
լուկ՝ որոշեն որ զղջումի զան՝ բայց շուտով  
կը թունան . ու իրենց բեռը պակսեցնելուն  
տեղը ամեն օր կ'աւելցնեն : Ըմեն մէկ փորձ  
ընելուն՝ կը տեսնեն որ առջինէն աւելի  
ծանր է իրենց բեռը, բայց քիչ մը ատեն  
ալ ետք կը ճգեն ունայն յուսով՝ որ ետքը  
աւելի կարող պիտի ըլլան ան բանը կա-  
տարելու : Ըս կերպով յառաջ կ'երթան  
իրենց բեռանը վրայ միշտ բեռ աւելցնեւ  
լով՝ մինչեւ որ ալ տանելը անկարել կ'ը-  
լայ, ու ան ատենը Ըստուծոյ շնորհքէն յու-  
սահատելով ու իրենց մեղքերուն վրայ ըլլ  
զղջալով վար կ'իյնան ու կը մեռնին :  
Դարձիր նորէն իմ որդիս, ու նայէ այն ծեր  
մարդուն վախճանը՝ որուն ծառերէն ոստե-  
րու բեռ մը զիզելը տեսար» : Ճգնաւորը  
նայեցաւ ու տեսաւ որ ունայն տեղը կը  
փորձեր ան դիզուած փայտերը վերցնելու՝  
որ մինչեւ ան ատենը իր վերցնելու կարու-  
զութիւնէն շատանդին անցեր էր անոր ժող-  
ված դէզը : Իր տկար անդամները ան  
բեռին վրայ ծուած կը դողդզար . իր զօ-  
րութեան մնացորդը շուտ պակսելու վրայ

էր . մահուան մթութիւնը բոլորտիքը պաշ-  
տած էր . և բեռը վերցնելու կարկամեալ  
ու անկարող փորձ մը ընելէն ետքը՝ վար  
ինկաւ ու հոգին փչեց :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԳԻՐՔԸ

ՏԱՐՅ ՀԱՄԱՐ

**Օ**րիորդաց դպրոցի մը մէջ անգամ մը  
քարոզ տուած ատենս իմ խօսքիս բնաբան  
դրի : Եղեկիելի՝ դաշտին մէջի չորցած ու-  
կորներուն մէկէն 'ի մէկ յարութիւն առնե-  
լուն տեսիլքին ստորագրութիւնը . քարո-  
զէն ետ դարձած ատեննիս, աղջիկներէն մէ-  
կը ըստու ինծի թէ՝ «Ծն ի՞նչ զամանալի  
բան էր քու պատմած պատմութիւնդ : Կը ը-  
նալոյ ան բանը ճշմարիս ըլլալ» :

Վպահով ըսի զինքը՝ որ ճշմարիս է ան  
պատմութիւնը . բայց անոնք հաղիւ թէ կը  
հաւատային ըստիս . ու կը զամանային թէ  
ուսկից գտած եմ ան պատմութիւնը : Ծոկ  
որ անիկա հին գիրքի մը մէջէ գտեր եմ  
որն որ խիստ սրտառուչ պատմութիւննե-  
րով լցուն է . ու ես ալ բնաւ երբէք ուրիշ  
տեղմը անոր նմանը գտած չեմ :

«Ո՞չ» ըսին անոնք, «ատիկա զարմանալի  
և հետաքրքրական գիրք մը ըլլալու է : Ո՞ր  
չափ կը փափաքինք որ ատիկա կարգանք» :

«Եղեկի» ըսի, «թէ որ ուզէք կրնաք  
կարդալ . վասն զի գրելթէ ամեն տեղ և  
շատ տուներու մէջ ընդհանրապէս գրա-  
նուած մէկ գիրք մըն է, ու գուգ ալ կրնաք  
գիւրաւ գտնալ» :

«Ո՞չ, Ըստուածաշունչը, Ըստուածա-  
շունչը», երկուքը մէկ բերան սկսան կան-  
չել :

«Բայց աս ի՞նչպէս բան է», հարցու-  
ցի իրենց, «որ զուգ առաջուց բնաւ լսած  
չէք իմ ըստ պատմութիւնս : Երգեօք  
Ըստուածաշունչը բնաւ ծայրէ 'ի ծայր չէք  
կարգացեր» . «Ըստուածաշունչը ծայրէ 'ի  
ծայր կարդալ», կանչեց մեծը՝ որ 14 կամ 15  
տարեկան զուաթերեսա աղջիկ մըն էր . «Իրաւ  
որ բնաւ ասանկ բան մը միտքէս անգամ չէք  
անցներ» : Կարծիմ թէ ատիկա կարդա-  
ցողները, ինծի հետ մէկտեղ պիտի համա-  
ձայնին ըսելու որ՝ շատ աւելի խելացի պիտի

ըլլար, թէ որ ոչ միայն անանկ բան մը մըստ քէն անցներ՝ այլ թէ որ իրօք քանի քանի անգամ ծայրէ ՚ի ծայր կարդար : Ես ալ շատ պիտի ցաւիմ՝ թէ որ իմ զաւկըներէս մէկը Ըստուածաշունչին մէջէն զրուցուած պատմութիւն մը լսէ, ու անոր ո՞ր տեղէն ըլլալը չգիտնայ : Բայց աս տղիտութեան խայտառակութենէն ազատելու մի միայն ճամբան՝ Ըստուածաշունչին կարդաւշունակի ծայրէ ՚ի ծայր կարդան է : Կատերը՝ Ըստուածաշունչին մէկ կառոր մը տեղը կը կարդան միայն՝ քիչ մը աս տեղէն քիչ, ալ ան տեղէն, բայց Ըստուածաշունչին մէջ պարունակուած մէկ գիրքը անգամ ծայրէ ՚ի ծայր չեն կարդար : Բայց աս կերպով ոչ երբէք Ըստուածաշունչին մէջ ինչ պարունակուիլ կրնան գիտնալ : Թէ որ մէկը հայրենիքէն հեռու տեղմը գացած ըլլար, ու իր հայրը նամակ մը գրէր, գոհ պիտի ըլլար արդեօք միայն քանի մը տող ասիէ ու քանի մը տող անկէ կարդալով վերցնել մէկի նետելու : Թէ որ ասանկ ընէր, կրօնար ըլլալո՞ր՝ նամակին մէջ գրուած մէկ ամենահարկաւոր բան մը զանց ըրած ըլլար : Կարելի է որ՝ իմացուցեր էր թէ ինքը պիտի գայ հայրենիքը տանի իր որդին, և տեղեկութիւններ ալ տրուած էր թէ ինչ ընելու է ճամբորդութեանը պատրաստութիւնտեսնելու համար . բայց որդին չկրնար այս տեղեկութիւններ տեսնել, ու ասանկով անոր գալու ատենը պատրաստ չկրնար ըլլալ : Ըստուածաշունչը երկնաւոր հօրենուս հետունեցած հաղորդակցութիւննիս կը սորվեցնէ՝ որուն մէջ տեղեկութիւններ տուած է թէ ինչ չպէս պատրաստ ըլլալու ենք, ինքը մեղ մեր հայրենիքը տանելու եկած ատենը : Բայց թէ որ զանց ընենք անոր մէջի գրուածները ու պատրաստ չըլլանք իր եկած ժամանակին, այն երկնաւոր հայրենիքնիս կը կորսնցնենք՝ որն որ իրեն զաւակացը համար պատրաստած է :

Կատերը կան որ՝ Ըստուածաշունչը կարդաւ ծայրէ ՚ի ծայր մէկ տարուան մէջ կարդալու սովորութիւն, քաերեն, և եաւալ գիտեմ մէկ օրիորդ մը՝ որ ութը տարեկան գեռ չեղած, տասն անգամ լմնցուցած էր, ու անկէ ՚ի վեր ալ ինն անգամ հինգ վեց տարի շարունակ, տարին անգամ

մը ծայրէ ՚ի ծայր լմնցընելով : Թէ որ մեր ընթերցողներէն ալ Ըստուածաշունչը այս կերպով կարդացողներուն կարդը անցնելու զրուցները ըլլան, տարին անգամ մը ծայրէ ՚ի ծայր լմնցընելու եղանակը առջենին կը դընենք՝ որ կարող ըլլան գիւրաւ այս գործին ձեռք զարնելու : Թէ որ Հին կտակարանէն ամէն առտու երկու գլուխ կարդան, ու գըլուխ մըն ալ Եսոր կտակարանէն ամէն իրեկուն, և Եսոր կտակարանը լմնալէն ետեւ անոր տեղը Երեմիա, Ոլքերը, և Եզեկիելը կարդան, ու կիրակի օրերը երկու գլուխ Սաղմոս ալ բացէն կարդան, բոլոր Ըստուածաշունչը մէկ տարուան մէջ կը լմնալէն այս : Եւ թող ընթերցողը աս խօսքիս հաւատան որ՝ գիտութեան և իմաստութեան գանձ մը շահէն ՚ի զատ, մէկ անգամ մը լմնցնելէն ետեւ պիտի բան որ աշխարհիս մէջ գտնուած գիրքերէն ամէնէն աւելի հետաքրքրականն է ասիկա : Զկայ անանկ մէկ պատմութեան գիրք մը՝ որ Ըստուածաշունչին մէջ եղած պատմութիւններուն չափ հետաքրքրական ըլլայ . վասն զի անոնց մէջ կը տեսնուի Ըստուծոյ ձեռքը՝ որ մէկ մեծ գիտաւորութեան մը գծագրութիւնը կ'ընէ, և Ճշմարիտ ըլլալուն ալ Ըստուծոյ Խօսքը կը վկայէ : Զկայ մէկ վիպասանութիւն մը՝ Յովսէփին, Հոռութին, և Եսթերին Ճշմարիտ պատմութեանցը հաւասար : Զկայ մէկ առակ մը՝ որ Եսոր կտակարանին մէջ գրուած առակներուն ուժը, ու անոնց չափ հետաքրքրականութիւն ունենայ : Զկայ Յովին նման բանաստեղծութիւն մը, ոչ ալ Յովսէփին ու Դաւիթին երգերուն պէս երգ մը : Զկայ մէկ ճարտասանական գրուածք մը՝ որ Եսայիին ոճին չափ վսեմութիւն ունենայ : Զկայ գիտութեանց մէջ անանկ մէկ զարմանալիք մը՝ որ յայտնեալ Ճշմարտութեան խորհուրդներուն չափ խորին ըլլայ : Ըստուածաշունչը՝ բոլոր Ճշմարիտ գիտութեան հիմ, ու բոլոր իմաստութեան հաստատութիւնն է : Ուրիշ ինչ բան ալ որ գիտնայ մէկը ամօթէ և անիկա չգիտնալը, ու քանի որ կարդայ, այնքան աւելի խորունկ զացումավ օգուտ կը քաղէ անիէ : Թէ որ անգամ մը միայն հեղինակին մէկուն շնած զրօսանքի գիրքը կարդանք, բաւական կ'ըլլայ : Քիչ կը հանդիպի որ անգամ մ'ալ անիկա

աչքէ անցնելուղնք: Բայց Վատուծոյ խօսքը՝ քանի անգամ որ կարդանք՝ նոր նոր գեղեցկութիւններ կը տեսնենք ու նորանոր զարմանալիքներ: և աս բանը ճշմարիս ըլլալը ան ատենը աւելի աղէկ կրնանք հասկնալ, թէ որ հարիւր տարի կեանք ունենանք ու ամէն օր ալ անիկա կարդանք: Աս գիրքը՝ ոսկիի, արծաթի, ու գոհարի հանքի մը կը նմանի՞ ու ըսնց վրան երկաթով ու պղինձով ծածկուածէ, և ասոնք մարդոց գործածութեանը շատ հարկաւոր ըլլալուն՝ վրան կ'ըլլան: ոսկին ու արծաթը՝ որ այնչափ բացարձակապէս հարկաւոր չեն, բայց շատ օգտակար են, անոնց տակը կ'ըլլան: ու քանի որ հանքը փորելով դար վրա իջնանք, նոր նոր երակներ կը գտնենք՝ որոնց մէջէն յակինթ, անդամանդ, ու պատուական քարեր կ'ելլէ, ու որոնց գերազանցութեանն ու գեղեցկութեանը պիտի զարմանանք:

ԱՍ ԿԵՍ ԴԱՐՈՒՆ ՊՏՈՒԽՆԵՐԸ. Յիսուն տարի առաջ աշխարհիս անձանօթ էր շագնաւը: Հիմա՝ 1,200 էն աւելի, միայն Եմբրիայի ջուրերը կը գտնուին: Աս դարուն սկիզբը աշխարհիս մէջ մէկ երկաթի ճամբար մը չկար. Հիմա՝ 13,227 մշն ճամբար, միայն Եմբրիայի մէջ կայ. 20,000 մշնի չափ ալ կը շնուի. 7,000 մշն ալ Անդեխայի մէջ շնուածէ, ու 5,000 կը շնուի: Այս դար առաջ 2,000 մշն հեռուն լուր մը իրկելք որ գրեթէ 700 ժամու ճամբար կ'ըլլայ, մէկ քանի չափաթ կը քշէր, հիմա՝ Եմբրիայի մէջ այսպահ չեռաւորութեամբ տեղ մը լուր հասցնել, ելքտրական թէլէկրաֆոն մէկ վայրիեան անդամ չըէքր. աս տեսակի թէլէկրաֆ Միացեալ Կահանդաց մէջ՝ արդէն 16,729 մշն մշն տեղ շինուած է. ու Եւրոպայի մէջ՝ Անգլիա, Գաղղիա, Իրուսիա և Կարմանիա, 9,450 մշն տեղ: 1800 ին ամենէն արագ բանու տպագրութեան մամուլը՝ ձեռքով մէկ ժամու մէջ 200 էն աւելի չէր կրնար տպել. Հիմա՝ 20,000 թուղթը մէկ ժամու մէջ կը տպեի, շագի մամուլը:

Ըստմարանին Տարեկան գինը 18 դուրսուշ կանխիկ, կամ ամէն մէկ ամսական տետրակին գինը 60 փարայ է:

Դուրսելը իրկուելու փօնդային ժամեւը առանդին վրայ է: Փօնդային ժամեւը ինայէլ ուղղինը իրան Տաճկասդանէ որ և էցէ տաղաթինը եղած Բրօնէն լունադ գրտածուներուն ուղղ գդանել:

ԶԱՐԵՐՈՒՆ ԽՈՐՃՈՒՐՆԵՐԸ ՑՐՈՒԱԾ  
ԵՒ ՓՈՒՑԸ ԵՎԸ

Անդին արիւնարբու Ուարիամ թագուհին որ 1553 ին աթուը նստաւ, Անդին Ակովտիա և Ուէյլս գտնուած շատ մը իրօն թէսթանդները մեռցնել տալէն ետե, 1558 ին մէկ հրամանագիր մը ստորագրեց՝ որով իշխանութիւն կու տար Տօքմթը Քաօլ անուն նախանձաւոր պապականի մը, որ Խոլմնտայի մէջ գտնուած բոլոր հերետիկոնները հալածէ և բնացնչ ընէ: Աս մարդը անմիջապէս իր անգութ պատգամաւորութիւնը գործադրելու համար ճամբար ելաւ, ու քանի որ Չեսթը քաղաքին մէջ էր աս իր գործը քաղաքապետին իմացուց, և նոյն ատենը մատովը ցուցուց ան սնտուկը՝ որուն մէջն էր “ան որ Խոլմնտայի հերետիկոնները պիտի բնացնչ ընէր”: Բրօնէսթանդներուն բարեկամ կին մը որ Խոլմնտայի Տուպին քաղաքը եղայր մը ունէր, աս խօսերը լսելով տակն ու վրայ եղաւ, ու պատահութեան մը սպասելով սնտուկը բացաւ, գուրս հանեց հըրամանագիրը ու անոր տեղը թերթ մը թուղթ դրաւ որուն մէջ պլեկը էր պուրակ մը խաղողի թուղթ գաւազանակիր զօրական ( պատման ) ըստուած խաղը թուղթին մէկն ալ վըրան դրուած: Տօքմօրը հետևեալ օրը նաւով պատգամաւոր կոտերուն և գաղտնի խորհրդականներուն ասցելը ելաւ ու անոնց ներկայացուց իր սնտուկը. ասիկա բանալուն ՚ի զարմացումն և ՚ի շփոթութիւն անոնց՝ պուրակ մը խաղը թուղթէն ՚ի զատ բան մը չերեցաւ: Տօքմօրը սաստիկ խպնելով Անդին գարձաւ, ուրիշ հրամանագիր մը առաւ, բայց յաջող հով ըլլալու արագ բանու տպագրութեան մամուլը՝ ձեռքով մէկ ժամու մէջ 200 էն աւելի չէր կրնար տպել. Հիմա՝ 20,000 թուղթը մէկ ժամու մէջ կը տպեի, շագի մամուլը: